



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
Մ Ա Ր Ձ Պ Ե Տ**

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22

„23„ „06„ 2014թ

N 01/08.1/3268-14

Ֆաքս (374010) 28 18 32

**« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՊԱՐՈՆ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Սահակյան

Ի կատարումն « փոխվարչապետ, « տարածքային կառավարման նախարարի 2014թ. հունիսի 5-ի «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ-ի ծննդաբերական մասնաշենքը « ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը հանձնելու մասին թիվ 01/15/2920-14 հանձնարարականի՝ հայտում ենք, որ « կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N10 հավելվածի Վայքի տարածաշրջան բաժնի երկրորդ կետի կիրառումը ներկայումս աննպատակահարմար է և կհանգեցնի Վայքի առողջապահական բակ բաժնետիրական ընկերության բնականոն աշխատանքների խաթարմանը:

« կառավարության վերը նշված որոշման ընդունումից հետո ծննդաբերական մասնաշենքը « ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը տարիներ շարունակ չի հանձնվել, քանի որ N 1911-Ն որոշմամբ սահմանվել է, որ «Վայքի ԲՄ» ՓԲԸ-ի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը միացման եղանակով պետք է հանձնվեր «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին, ինչը հաշվի առնելով Վայքի տարածաշրջանի բնակչության խնդրանքը հետաձգվեց: Իսկ 2014թ. հունվարի 23-ին «

կառավարության <<<< կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> N 50-Ն որոշմամբ ընկերությունում թողնվեցին բժշկական բոլոր ծառայությունները, ավելին՝ որոշման 3.2. կետով նախատեսվեց առաջին կիսամյակի ավարտին մահճակալների թվի կրճատման եղանակով <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի ինֆեկցիոն ծառայությունը տեղափոխել <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ:

Հարգելի պարոն Սահակյան խնդրում եմ հաշվի առնել, որ <<Վայքի ԲՄ>> ՓԲԸ-ի գործող ծննդաբերական մասնաշենքում են տեղակայված նույն ընկերության մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը, թերապևտիկ բաժանմունքը, վիճակագրական և տեղամասային թերապևտիկ ծառայությունները, ինչպես նաև կանացի և մանկական կոնսուլտացիաները, պոլիկլինիկական կաբինետները (աչքի, սրտի, էխոկարդիոգրամ և էնդոկրին):

Հարգելի պարոն Սահակյան, վերը նշված գույքի հանձնումը Ձեր վարչությանը ներկա պահին գտնում եմ ոչ նպատակահարմար, ուստի առաջարկում եմ հարցը լուծել << << կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման Վայքի տարածաշրջան բաժնի երկրորդ կետը չեղյալ ճանաչելու մասին>> որոշման նախագծով:

Հարգանքներով՝



Է. ՂԱԶԱՐՅԱՆ